## ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ 2020-2021թթ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- ✓ Սկսնակ դասախոսների համար իրականացվել վերապատրաստում՝ ծանոթացնելով մատենավարությանը, մոդուլային ծրագրերի ու թեմատիկների կազմման, գնահատման միջոցների ընտրության նրբություններին և առանձնահատկություններին: Մենթորության կարգի համաձայն՝ 2020-2021 ուստարում ընդունված նոր աշխատակիցների համար ընտրվել է մենթոր-դասախոս՝ տվյալ ամբիոնից որևէ փորձառու մասնագետի, վերջում տրվել է հարցաթերթ՝ ըստ որի նոր կամ սկսնակ աշխատակցից եզրակացվել է մենթորության արդյունավետությունը:

- ✓ Ուսումնական տարվա սկզբում կազմվել է ներքին վերապատրաստումների ժամանակացույց, ընտրվել ներկայացվող զեկույցների թեմաները, կազմակերպել են վերապատրաստումները, որոնք նպաստել են ուսանողակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը, ժամանակակից մեթոդների կիրառմանը:

- ✓ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԱՆՑԿԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ, ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՈԴՈՒԼՆԵՐԻ, ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ համաձայն՝ կազմակերպվել և իրականացվել են վերահանձնումներ. ուսանողների դիմումների համաձայն՝ կազմվել են առարկայական հանձնաժողովներ, վերահանձնումների ժամանակացույց, որի իրականացման վերաբերյալ զեկուցագրով տեղեկակացվել է տնօրինությանը, ամփոփագրերում և ստուգման գրքույկներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

- ✓ Կորոնավիրուսով պայմանավորված՝ ուսանողների կողմից Քոլեջում իրականացվող ուսումնական ծրագրերի արդյունավետության և դասախոսների գնահատում չի իրականացվել: Հիմնականում հարցումներն իրականացվել են օնլայն դասավանդումների դժվարությունների վերաբերյալ, որոնց մասին պարբերաբար տեղեկացվել է տնօրինությանը և տրվել համապատասխան լուծումներ :

✓ Յուրաքանչյուր կիսամյակի համար կազմվել է ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի անդամների կողմից իրականացվող դասալսումների ժամանակացույց, իրականացվել դասալսումները՝ գրի առնելով տվյալ դասի առավելություններն ու թերությունները, որոնց մասին տեղեկացվել է դասախոսներին: Կիսամյակների ավարտին ամբիոնի վարիչների կողմից արված եզրակացությունների և ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի անդամների կողմից իրականացված դասալսումների արդյունքների հիման վրա կատարվել են քննարկումներ՝ բացթողումները շտկելու և առավել արդյունավետ դասապրոցես կազմակերպելու նպատակով:

Կատարող Ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի

պատասխանատու՝ ____________ Եվա Մարգարյան

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի

## Մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ենթակառուցվածքի 2021 -2022թթ.

29 հունիսի 2022թթ

Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ենթակառուցվածքը իրականացնում որակի ներքին ապահովման գործընթացը՝ առաջնորդվելով կրթության որակի բնագավառում ընտրած քաղաքականությամբ 2021-2022թթ ուստարվա աշխատանքային պլանով, որը կազմվել է համաձայն զարգացման 2018-2023 ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցից բխող պլանի: Ենթակառուցվածքը համաձայն իրենց գործառույթների, իրականացրել են 2018-2023 ուստարվա պլանով սահմանված աշխատանքները: Ենթակառուցվածքը իր առջև դրված աշխատանքներն իրականացրել է համապատասխան ժամկետներում, մի շարք գործընթացներ գտնվում են կատարման փուլում, նրանք իրենց բնույթով պարբերաբար իրականացվող են և կատարվում են՝ համաձայն ընթացիկ պահանջների: Սերտ համագործակցելով կառավարման տարբեր կառուցվածքների հետ Ենթակառուցվածքը աշխատել է թիմով: Ենթակառուցվածքի ամբողջ գործունեությունն ամրագրված է բաժնի նիստերի արձանագրություններում և համապատասխան փաստաթղթերում: Ենթակառուցվածքի աշխատակիցները կարևորում են Քոլեջում որակի ներքին ապահովմանը միտված գործընթացների արդյունավետ իրականացումը և իրենց մշտական խորհրդատվությամբ աջակցում են բոլոր ենթակառուցվածքներին՝ ուղղորդելով նրանց գործընթացներն իրականացնելու որակի ապահովման շրջափուլով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), առաջնորդվելու համապատասխան քաղաքականություններով, կանոնակարգերով և ընթացակարգերով: Նշենք, որ 2022-2023թթ. Քոլեջը իրականացնելու է «Մասնագիտական կրթության որակի» ինքնավերլուծություն: Ենթակառուցվածքը ուստարվա սկզին մասնակցել է ամբիոնների կողմից ուսումնական ծրագրերի վերանայմանը: Արվել են մի շարք նկատառումներ հետագա համապատասխան փոփոխությունների համար:

Որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակներում պարբերաբար իրականացնում է նաև վերապատրաստման դասընթացներ և սկսնակ դասախոսների մենթորություն: Իրականացվել է դասալսումներ, որի արդյունքները քննարկվել են, իսկ լավագույն մեթոդները կիրառվել փորձի փոխանակման սկզբունքով:

Ընդունվել են վերահանձնման դիմումների ընդունում, կազմակերպում և իրականացում: Այն միտված է ուսանողների գիտելիքների բարելավմանը և շարունակական կրթությանը:

Որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակներում պարբերաբար իրականացնում է նաև վերապատրաստման դասընթացներ: Իրականացվել են մի շարք հարցումներ և հարցումների արդյունքների վերլուծություններ: Դրանց ընդհանրացված արդյունքները կտեղադրվեն կայքում, իսկ մանրամասն վերլուծությունները կուղարկվեն բոլոր ամբիոններ: Ակնհայտ է, որ համապատասխան եզրահանգումներ պետք է կատարեն ամբիոնները և կրթական ծրագրերի արդյունավետության ապահովման համար ուշադրություն դարձնեն նաև իրենց կադրային ներուժին:

Քննարկվել են կարիերայի կենտրոնի, պրակտիկայի բաժնի և ամբիոնների տարեկան հաշվետվությունները և արվել համապատասխան հետևություններ:

Արդյունքների հիման վրա հետագայում կկազմվի համապատասխան պլան: Բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին ուշադրություն դարձնել հարցումների արդյունքների վերլուծություններին և անպայման քննարկել ու իրականացնել բարելավման գործընթացներ, ուշադրություն դարձնել արտաքին շահակիցների առաջարկներին:

Ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի
պատասխանատու __________ Տ.Խաչատրյան

Հարգելի դասախոսներ, խնդրում ենք անկեղծ պատասխանել ներքոնշյալ հարցերին օտար լեզվի՝ անգլերենի, դասընթացները արդյունավետ կազմակերպելու համար

Գոհար Մանուկյան,
/անուն,ազգանուն/

1. Անգլերեն լեզվի իմացություն, նախնական գիտելիքներ

| | գերազանց | լավ | բավարար | չեմ տիրապետում |
|---|---|---|---|---|
| Գրավոր | | + | | |
| Բանավոր | | + | | |

2. Դասավանդվող առարկայի մասնագիտական անգլերեն լեզվի իմացություն

| | Գերազանց | լավ | բավարար | չեմ տիրապետում |
|---|---|---|---|---|
| Գրավոր | | | + | |
| Բանավոր | | | + | |

3. Մասնակցել ե՞ք Անգլերեն լեզվի դասընթացների

(Այո) ոչ

4. Անգլերեն լեզվի իմացությունը որքանո՞վ արդյունավետ կլինի դասավանդման գործընթացում: Լեզվի իմացության առավելությունները:

Անգլերեն լեզվի իմացությունը շատ կարևոր և արդյունավետ կլինի դասավանդման գործընթացում, քանի [illegible] անհրաժեշտ է: Ես [illegible] պատրաստակամ եմ [illegible]

5. Պատրաստակամ ե՞ք մասնակցել Քոլեջում կազմակերպվող դասընթացներին:

(Այո) ոչ

Հարգելի դասախոսներ, խնդրում ենք պատասխանել ներքոնշյալ հարցերին օտար լեզվի իմացության վերաբերյալ, դասընթացներն արդյունավետ կազմակերպելու համար

1. Ռուսաց լեզվի իմացություն, նախնական գիտելիքներ

| | Գերազանց | լավ | բավարար | անբավարար |
|---|---|---|---|---|
| Գրավոր | | ✓ | | |
| Բանավոր | ✓ | | | |

2.Դասավանդվող առարկայի մասնագիտական ռուսերեն լեզվի իմացություն

| | Գերազանց | լավ | բավարար | անբավարար |
|---|---|---|---|---|
| Գրավոր | | ✓ | | |
| Բանավոր | | ✓ | | |

3.Անգլերեն լեզվի իմացություն, նախնական գիտելիքներ

| | Գերազանց | լավ | բավարար | անբավարար |
|---|---|---|---|---|
| Գրավոր | | | ✓ | |
| Բանավոր | | | ✓ | |

4.Դասավանդվող առարկայի մասնագիտական անգլերեն լեզվի իմացություն

| | Գերազանց | լավ | բավարար | անբավարար |
|---|---|---|---|---|
| Գրավոր | | | | — |
| Բանավոր | | | | — |

5.Մասնակցել եք Անգլերեն լեզվի դասընթացների

Այո ոչ ✓

6. Մասնակցել եք Ռուսերեն լեզվի դասընթացների

Այո ոչ ✓

7.Անգլերեն և ռուսերեն լեզվի իմացությունը որքանով արդյունավետ կլինի դասավանդման գործընթացում: Լեզվի իմացության առավելությունները:

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

8.Պատրաստակամ եք մասնակցել Քոլեջում կազմակերպվող դասընթացներին

Այո ոչ ✓

Հենք Սահրյան